



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հուլիսի 2024 թվականի N ²⁸¹ -Ա

**«ՎԵՐԻՇԵՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԱՏԱԼՅԱ ՀԱԿՈՔՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ
ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՏԱՐՈՒՄԸ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԺԻՇԿ ՇՈՒՇԱՆ ԹԵՎԱՆՅԱՆԻՆ
ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ և 163-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով «Վերիշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ն. Հակոբյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. «Վերիշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նատալյա Հակոբյանին 2024 թվականի օգոստոսի 6-ից 19-ը ներառյալ տրամադրել 2023-2024 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի մի մասը՝ 10 աշխատանքային օր:
2. Արձակուրդում գտնվելու ընթացքում «Վերիշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը հանձնարարել ընտանեկան բժիշկ Շուշան Թևանյանին:

